

վիճակին՝ վարժեալ էր քաջ ՚ի զինաշարժութիւն, եւ անդստին ՚ի պատանեկութենէ ցուցեալ զարիականն պնդութիւն եւ զվեհութիւն:

Գէթ տասն ամ տեւեցին այսպիսի հրահանգք նորին ՚ի Պապեոն, ՚ի վերջին ամս իշխանութեան Թորոսի, որ ընդ Մլեհի վրէժս ՚ի Յունաց լուծանէր զչարաչար սպանման հօր նորա եւ զիւրեանց եղբօր՝ Ստեփանէի, եւ յետոյ ՚ի բռնակալութեանն Մլեհի, որ զօրինաւոր ժառանգն՝ զմանկիկն Թորոսի՝ ստիպեաց փախստական տանել մինչեւ ՚ի Հռովմայ, եւ թերեւս գաղտնապէս անդ մեռուցանել զանմեղն, որպէս յայտնապէս՝ զխնամակալ նորին եւ զպայլ՝ Թովմաս, զմերձաւոր արեան իւրոյ. ՚ի մահ արդեօք մատնէր եւ զորդիս Ստեփանէի՝ առ անկասկած սեփականել ինքեան եւ ծննդոց իւրոց՝ զիշխանութիւն երկրին, եթէ յաջողեալ էր ՚ի բուռն արկանել զնոսս, կամ մուծանել դաւաճանս ՚ի Պապեոն, որում ոչ կարէր ստնանել պատերազմական արուեստիւ, որպէս ոչ կարաց եւ Լամբրունի, թէ եւ տարելոր ժամանակօք պաշարեաց եւ յոյժ ՚ի նեղ արկ: Իսկ իբրեւ ըստ գործոց իւրոց ընկալաւ եւ ինքն չարաչար կատարած՝ յիւրոց իսկ զօրաց նենգեալ եւ խողխողեալ, գահերիցութիւն ռուբինեան տոհմին անկանէր անհակառակ յորդիս Ստեփանէի. եւ անդէն փութանակի հրաւերք եւ ինդրակք առաքեցան ՚ի զօրացն եւ յիշխանաց՝ առ անդրանիկն Ռուբէն (Բ), գալ եւ պայագատել: Ոչ դանդաղեաց եւ բարեմիտն Բակուրան՝ քեռի նորա՝ առաքել զնա իշխանական շքով եւ առատ գանձուք, որք եւ խայծ լինէին յորսալ զսիրտս հրաւիրողացն. այլ առաւել եւս հաճոյացան նոցա զուարթամիտ եւ համբոյր բարք նորընծայ Պարոնին, որ յիշատակաւ աղետից հօրն գորովելի լինէր. որոց՝ եւ պատշաճագեղ եւ արիական տեսիլ կերպարանացն՝ կենդանի նշանակ կայր: Դարձեալ եւ աջողակութիւնն ՚ի զէնս եւ ՚ի նետաձգութիւնս՝ յինքն յանկուցանէր զհասակակից երիտասարդան, զորս եւ մեծածախ խրախճանօք զուարթացուցանէր, անխնայ սփռելով զանիրաւութեամբ մթերեալսն ՚ի Մլեհէ. միանգամայն եւ արդարակորով խորագիտութեամբ լուծանելով զվրէժ սպանման նորին ՚ի դաւողացն, իբրեւ երախտաւորաց վարձս խոստանալով՝ առ ՚ի գտանել զնոսին, եւ ՚ի խոստովանել երկուց ոմանց յուսով վարձուցն, եթէ ինքեանց ձեռօք սպանին զնա, զերկուսին եւս յիւրեանց բերանոց դատեալ՝ տայր զէտամոյն առնել:

Զամենայն ժամանակս իշխանութեան իւրոյ՝ զամս երկուտասան, Ռուբէն պարապէր կէս ՚ի պատերազմ եւ ՚ի յափշտակութիւն քաղաքաց եւ